

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Սույն հավելվածով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 3.2-րդ մասին համապատասխան՝ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը էլեկտրոնային եղանակով իրականացնելու դեպքերի և կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն հավելվածով սահմանված դեպքերում՝ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունն ապրանքների շրջանառության մասնակիցները փոխանցում են էլեկտրոնային եղանակով՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 10-ի N 312-Լ որոշմանը համապատասխան՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման ազգային օպերատորի մշակած և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հետ համաձայնեցված բջջային հավելվածով (այսուհետ՝ հավելված):

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի N 1418-Ն որոշմանը համապատասխան՝ հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների շրջանառության նկատմամբ մոնիտորինգի տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ համակարգ) միջոցով:

3. Հավելվածը գրանցելու և գրանցումից հանելու համար դիմումները ներկայացվում են հարկային մարմնի հաշվետվություններ ներկայացնելու համակարգի (<https://file-online.taxservice.am>) միջոցով:

4. Նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկությունը հավելվածի միջոցով հարկային մարմնի միասնական շտեմարան փոխանցվում է մինչև դրոշմավորված ապրանքը շրջանառությունից հանելը՝ հետևյալ դեպքերում.

1) նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքն այլ ապրանքի (այդ թվում՝ կիսաֆաբրիկատի) արտադրության (պատրաստման) մեջ կամ սեփական կարիքների համար օգտագործում: Սույն ենթակետում նշված դեպքում տեղեկությունը փոխանցում է դրոշմավորված ապրանքն այլ ապրանքի (այդ թվում՝ կիսաֆաբրիկատի) արտադրության (պատրաստման) մեջ կամ սեփական կարիքների համար օգտագործողը.

2) նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի (բացառությամբ խմբային փաթեթավորման և ապրանքի հավաքածուի) մասնակի օտարում: Սույն ենթակետում նշված դեպքում տեղեկությունը փոխանցում է դրոշմավորված ապրանքը մասնակի օտարողը.

3) ծառայության մատուցման ընթացքում նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի օգտագործում, եթե դրա արժեքը ներառվում է ծառայության արժեքի մեջ: Սույն ենթակետում նշված դեպքում տեղեկությունը փոխանցում է ծառայություն մատուցողը.

4) սույն կետի 1-3-րդ ենթակետերում չնշված այլ դեպքերում, երբ առկա չէ հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից հսկիչ դրամարկղային մեքենայի կամ դրան միացված ծրագրային կամ տեխնիկական միջոցներով նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների օտարման կամ օտարման պահին ապրանքի դիմաց վճարման փաստ: Սույն ենթակետում նշված դեպքերում տեղեկությունը փոխանցում է դրոշմավորված ապրանքը շրջանառությունից հանողը:

5. Սույն կարգի 4-րդ կետում նշված դեպքերում շրջանառությունից հանված նույնականացման միջոցի վերադարձ շրջանառության մեջ կարող է իրականացվել հավելվածի միջոցով, եթե վերադարձվող ապրանքը, որի վրա առկա է նույնականացման միջոցը, չի օգտագործվել, պահպանված են դրա ապրանքատեսքը և սպառողական հատկանիշները:

6. Նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու՝ շահագործումից հանելու դեպքերում այդ նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունը փոխանցվում է համակարգ՝ մինչև դրոշմավորված ապրանքի նույնականացման միջոցը շրջանառությունից հանելը՝ շահագործումից հանելը՝ հետևյալ դեպքերում.

1) նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի դուրսգրում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1261-Ն որոշմամբ սահմանված կարգով փաստաթղթավորված կորուստ համարվելու դեպքում: Սույն ենթակետում նշված դեպքում տեղեկությունը փոխանցում է դրոշմավորված ապրանքը դուրս գրողը.

2) նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի բռնագրավում կամ հոգուտ պետության տիրազուրկ ճանաչում: Սույն ենթակետում նշված դեպքում տեղեկությունը փոխանցում է այն անձը, որից բռնագրավվել է դրոշմավորված ապրանքը կամ որը հրաժարվել է դրոշմավորված ապրանքից հոգուտ պետության.

3) նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի արտահանում: Սույն ենթակետում նշված դեպքում տեղեկությունը փոխանցում է դրոշմավորված ապրանքը Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանողը.

4) նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի՝ փորձաքննության կամ լաբորատոր փորձարկման նպատակով դուրսգրում.

5) ներմուծողի կողմից նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի վերադարձ մատակարարին: Սույն ենթակետում նշված դեպքում տեղեկությունը փոխանցում է դրոշմավորված ապրանքը Հայաստանի Հանրապետություն ներմուծողը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ